# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-18 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | |
|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 11 | §Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ | §Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ | §Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան» ԲԲԸ | «Անբասիր ծառայության համար» մեդալը բաղկացած է երկու մասից՝ կախիչից և դրան կապօղակով ամրացված սկավառակից: Կախիչը պատրաստվում է թեթև մետաղից և ունի հնգանիստ բազմանկյան ձև: Կախիչի չափսերն են՝ 39x27x39x24x24 (շեղումը՝ +/- 1մմ), որը երեսպատված է 24 մմ լայնություն ունեցող մետաքսե մուարե մուգ կապույտ ժապավենով: Ժապավենի երկու եզրերով անցնում են կանաչ՝ 1 մմ, կարմիր՝ 3 մմ և դեղին՝ 1 մմ լայնությամբ իրար հաջորդող զոլակներ: «Անբասիր ծառայության համար» մեդալի տրամագիծը 38 մմ է (շեղումը՝ +/- 1մմ): Արտադրվում է պղնձի հատուկ համաձուլվածքից և ոսկեպատվում 999 հարգի ոսկով՝ նվազագույնը 0,5 մկմ հաստությամբ: Մեդալի հաստությունը՝ մոտավորապես 3 մմ: Մեդալը երկու կողմից եզրագծված է 1մմ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | լայնությամբ և 1 մմ բարձրությամբ շրջանակով: Մեդալի դիմային երեսը եզրազարդված է 1.81 մմ լայնությամբ հավերժության ռելիեֆային խորհրդանիշով: Հավերժության խորհրդանիշի ներսի եզրային հատվածին զուգահեռ առկա է «ԱՆԲԱՍԻՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» շրջանաձև գրությունը: Մեդալի կենտրոնում տեղակայված է հավասարակողմ եռանկյունը, որը քաղաքացիական պաշտպանության խորհրդանիշն է: Եռանկյան կենտրոնում տեղակայված է երկրագնդի խորհրդանիշը և ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության ռելիեֆային տարբերանշանը: Երկրագնդի խորհրդանիշը ներկված է մուգ կապույտ էմալով: «Անբասիր ծառայության համար» մեդալի դարձերեսի կենտրոնական մասում երեք շարքով 6.32 տառաչափով առկա է «ՀՀ ՆԳՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» լազերային փորագրությամբ հայերեն գրությունը: Դարձերեսին լազերային եղանակով դաջվում է հերթական համարը (սկսած՝ 001-ից): Մեդալի կախիչը ասեղային ամրակով է: Մատակարարը ապրանքը նախապես պետք է համաձայնեցնի պատվիրատուի հետ, իսկ մատակարարելուց ապրանքի բեռնաթափումը իրականացնի իր բանվորներով: Կցված նկարը կրում է տեղեկատվական բնույթ: Կրծքանշանի բնութագիրը բխում է ՀՀ Փոխվարչապետի 2025թ. սեպտեմբերի 1-ի N 577-Ն որոշումից: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО ШИН ЛИДЕР в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Հ-18 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | |
|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | наименование производителя | технические характеристики |
| 11 | | | | |